

ԱՐՅԱԽԻ ՓԱԿՈՒԱԾ ԹԵՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ (1933-1988)

Տ. ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ԱՍՐԵԱՆ
monk-deacon@mail.ru

ՄՈՒՏՔ

Արցախի թեմի պատմության խորհրդային շրջանը գրեթե չուսումնասիրուած էջ է հայ պատմագիտության մէջ: Բաւարար չափով ուսումնասիրուած կարելի է համարել միայն 1920-1933 ժամանակահատուածը՝ մինչեւ Արցախի թեմի փակումը: Մինչդեռ մինչեւ արցախեան ինքնորոշման շարժման արդիւնքում թեմի վերաբացումն ընկնող շրջանի վերաբերեալ որեւէ ուսումնասիրութիւն գրեթէ անհնար է գտնել: Հիմնականում արխիւային նորայայտ վաւերագրերի հիման վրայ կատարուած մեր այս ուսումնասիրութեամբ փորձ ենք արել չնչին ներդրում ունենալ այդ բացը լրացնելուն ուղղուած ճանապարհին:

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ԵՒ ԱՐՅԱԽԻ ԽՆԴԻՐԸ

1933ին Խորհրդային Ադրբեջանի իշխանութիւններին ի վերջոյ յաջողուեց փակել Արցախի պատմական թեմը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, առանց որի օժանդակութեան պարզապէս անհնարին կը լինէր Արցախի թեմի անգամ այդ շուրջ տասնամեայ գոյութիւնը Խորհրդային շրջանում, գործադրեց հնարատոր բոլոր միջոցները՝ թեմի փակումը կանխելու համար, սակայն այլեւս անգոր եղաւ Բաքուի վարչախմբի հակահայ քաղաքականութիւններին դիմակայելու: Արցախի թեմի փակմանը յաջորդող տարիներին, երբ ստալինեան բռնութիւնները հասել էին իրենց կիզակէտին, եւ Հայաստանեայց Եկեղեցին անցնում էր իր պատմութեան ամենասուսկալի շրջաններից մէկը, ուղղակի անհնար էր թեմի հետ կապուած որեւէ խնդրի արծարծումը Մայր Աթոռի կողմից, երբ՝ հենց ինքն ամենաիրական կերպով կանգնել էր վերացման սպառնալիքի առջեւ:

Այդուհանդերձ, նման պայմաններում անգամ, Մայր Աթոռի բարձրաստիճան հոգեւոր դասին յուզող խնդիրների շարքում առկայ էր ոչ միայն պազապէս Արցախի թեմի, այլ նաեւ Արցախի քաղաքական կարգավիճակի եւ յետագայ ճակատագրի հարցը: Այս հարցի շուրջ Մայր Աթոռի մտահոգութեան ու ներքին դիրքորոշման վերաբերեալ տեղեկանում ենք ստալինեան վարչակարգի կողմից բռնադատուած եւ յետագայում գնդակահարութեան դատա-

պարտուած բարձրաստիճան հոգեւորականներից, 1928-1932՝ Հիւսիսային Կովկասի թեմի առաջնորդ Բագրատ Արք. Վարդապարեանի հարցաքննութեան արձանագրութիւնից: 1938 Փետրուարի 19 թուագրուած հարցաքննութեան ժամանակ, պատասխանելով իրեն հասցէագրուած «ազգայնական-հակախորհրդային ոգով տրամադրուած տարր» (այլ կերպ ասած՝ հայրենասէր անձ) լինելու մեղադրանքին, նա համարձակօրէն յայտնում է. «*Չեմ ժխտում, որ ես, ինչպէս նաեւ Էջմիածնի վանքի միաբանութեան միւս անդամները, ազգայնական ենք եւ այդ ազգայնական դիրքերից մեր պարբերական հանդիպումների ժամանակ քննադատում էինք մեր իրականութեան առանձին անցանկալի երեւոյթները, այսպէս օրինակ՝ հայկական եկեղեցու ճակատագրի հարցը եւ այլն: ... Հայաստանի հարցում մենք միաբանութեան բոլոր անդամներս այն կարծիքին էինք, որ Հայաստանի սահմանները չափազանց սեղմուած են: Խօսում էինք թէ Լեռնային Ղարաբաղը ունի մօտ 150 հազար բնակիչ, բայց այնտեղ Աւրոնոմ մարզ է, այն էլ Ադրբեջանի ենթակայութեան տակ: Մենք գտնում էինք, որ լաւ կը լինէր Խորհրդային Հայաստանին միացնէին Լեռնային Ղարաբաղը, Նախիջեւանին՝ երկրամասը եւ Ախալցխան»³: Հասկանալի է, որ այդ տարիներին Մայր Աթոռը որեւէ հնարաւորութիւն չէր կարող ունենալ նման հարց բարձրացնելու: Սակայն այս դիրքորոշումն անփոփոխ մնաց եւ պաշտօնական մակարդակով բարձրաձայնուեց աւելի ուշ՝ Վազգէն Ա. կաթողիկոսի կողմից, երբ պայմանները մի փոքր աւելի նպաստաւոր էին այդ մասին գոնէ խօսելու համար: Դրան համառօտ կ'անդրադառնանք մեր յետագայ շարադրանքում:*

Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ ստալինեան բռնութիւններն ու հալածանքները սկսեցին մեղմանալ Երկրորդ Աշխարհամարտի տարիներին՝ կաթողիկոսական տեղապահ Գէորգ Արք. Չէօրէքչեանի վարած իմաստուն քաղաքականութեան եւ խորհրդային բանակին ցուցաբերած յայտնի աջակցութիւնների շնորհիւ: Յատկապէս 1945 Ապրիլի 19ին Չէօրէքչեանի՝ Ստալինի հետ նշանաւոր հանդիպումից յետոյ Հայ Եկեղեցու վիճակն անհամեմատ թեթեւացաւ: Ի թիւս մի շարք կարեւոր դրական տեղաշարժերի, տարբեր վայրերում սկսեցին վերաբացուել փակուած եկեղեցիներ⁴:

Սկսում հալոցքը որոշակի յոյսեր արթնացրեց նաեւ Արցախում խափանուած հոգեւոր-եկեղեցական կեանքի վերականգնման հարցում: Թեմի վերաբացումն իրատեսական չէր. անգամ եթէ խորհր-

դային իշխանությունները լիովին վերացնեին իրենց հակակերպական քաղաքականությունը (ինչը նույնպես դժուար էր ակնկալել), Բաքուի վարչակարգը ցանկացած գնով պատրաստ էր խափանել այդ ուղղութեամբ կատարուելիք բոլոր քայլերը: Առկայ իրավիճակում առաջնահերթ նպատակայարմարություններից էր եկեղեցիներ վերաբացելու եւ Արցախ հոգեւորականներ ուղարկելու խնդիրը:

ԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑԻ ՓԱԿՈՒԱԾ ԹԵՄՈՒՄ

1945ին Արցախի փակուած թեմում արձանագրուած է մի բացահիկ երեւոյթ, որը հրաշքի էր համագոր. Մարտակերտ ւաւնում վերաբացում է տեղի Ս. Յովհաննէս Կարապետ եկեղեցին: Այս եզակի իրողութեան մասին մեզ ծանօթ ոչ մի հեղինակ չի խօսում. Ընդհակառակը, տարածուած է այն տեսակէտը, որ 1930ականներից՝ թեմի փակումից մինչեւ վերաբացումն Արցախի տարածքում ոչ մի գործող եկեղեցի այլեւ չի եղել⁵: Մինչդեռ արխիւային փաստաթղթերը վկայում են, որ շուրջ մէկ տասնամեակ Մարտակերտի եկեղեցին, թէպէտ ահաւոր թշուառ վիճակում եւ պարբերական ընդհատումներով, այդուհանդերձ եղել է ԼՂԻՄ տարածքում գործող միակ թոյլատրուած եկեղեցին: Նշեալ վաւերագրերից տեղեկանում ենք նաեւ, որ Արցախի թեմի փակուած լինելու պայմաններում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը փորձում էր Լեռնային Ղարաբաղի տարածքում հոգեւոր-եկեղեցական կեանքը վերականգնել Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդների ու հոգեւորականների միջոցով (հասկանալի պատճառներով Մարտակերտի եկեղեցին նոյնպէս գործել է այդ թեմի կազմում) եւ նրանցից էլ տեղեկութիւններ էր ստանում Արցախում առկայ իրավիճակի մասին:

Մարտակերտի եկեղեցու վերաբացման վերաբերեալ առաջին տեղեկատուութիւններից մէկը ստանում ենք Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդ Ներսէս եպիսկոպոսի՝ 1946 Փետրուարի 27ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին (ԳՀԽ) ուղղուած զեկուցագրից: Առաջնորդը, յայտնելով, որ թեմն ունի երեք գործող եկեղեցի՝ Բաքուի, Կիրովաբադի (Գանձակի) եւ Մարտակերտի, տեղեկութիւններ է հաղորդում նաեւ վերջինիս մասին: Եկեղեցին ունէր քահանայ, սակայն, չնայած կէս տարուց աւել բացուած լինելու փաստին, այնտեղ պատարագ չէր մատուցում, քանի որ եկեղեցին գտնուում էր անմխիթար վիճակում եւ խիստ կարիք ունէր շուտափոյթ վերանորոգութեան, ինչը ձգձգում էր անհրաժեշտ գումար

րի եւ համապատասխան շինանիւթի բացակայութեան պատճառով. «պարուհանների ապակիները, անխտիր, բոլորն էլ ջարդուած են, քամին ու ցուրտն ամէն կողմից փչում են, որ դժուարեցնում է երկար մնալ եկեղեցում, թէ հոգեւորականներին եւ թէ հաւաքացեալներին: Պարուհանների մի մասը ծածկել են դիֆտով⁶, որ մթնացնում է եկեղեցին եւ արտաքինից աւելի պահեստի տաքութիւն է գործում եւ որը չի գրաւում հաւաքացեալներին»: Եկեղեցին չունէր նաեւ անհրաժեշտ եկեղեցական զգեստներ, անօթներ եւ իրեր (սկիւի, բուրվառ, խաչ եւն.): Եկեղեցու նախկին ծխական խորհուրդը վաղուց ցրուել էր, եւ կարիք կար նորը ձեւաւորելու:

Ներսէս եպիսկոպոսը, ԳՀԽին ներկայացնելով Խ. Ադրբեջանի տարածքում մի շարք բնակավայրերի անուններ, ուր առաջնահերթ պահանջ կար եկեղեցիներ բացելու, Լեռնային Ղարաբաղից նշում է Հադրուբը եւ Մարտունու շրջանի Գիւնէ Ճարտար գիւղը⁷:

1946 Մայիսի 8ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Զ.ին բաւականին ծաւալուն նամակ է գրում Շուշիի նախկին քահանայ, 25 տարի շարունակ Արցախի թեմի ընդհանուր գործակալ եւ վերատեսուչ եղած Պետրոս քահանայ Տէր-Յովհաննիսեանը: Իր նամակում, ի շարս այլ հարցերի, Պետրոս քահանան ավստսանք է յայտնում, որ Ստալինի՝ եկեղեցիներ վերաբացելու համար տրուած թոյլտուութիւնից յետոյ Ադրբեջանի տարածքում եղած թեմերում հնարաւոր է եղել վերաբացել ընդամենը երեք եկեղեցի՝ Բաքում, Կիրովաբադում եւ Մարտակերտում, դա էլ շնորհիւ Բաքուի եւ Թուրքեստանի թեմի ժամանակաւոր փոխանորդ Վարդգէս քահանայ Գրիգորեանի ջանքերի. «Այժմ կարծես թէ այդ յիշած թեմերի եկեղեցիների վերաբացման խնդիրը մատնուած է խորին եւ մեռելային անշարժութեան: Հարկաւոր է շարունակ այցելել այդ թեմերի եկեղեցիները, դիպել, որ ժողովուրդը տեսնի, որ այդ եկեղեցիները անտէր չեն, տէր ունին, որից խրախուսուած եւ ոգեւորուած դիմեն՝ վերաբանալու»: Նամակագիրը խնդրում է Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ առանձնայատուկ ուշադրութիւն յատկացնել մանաւանդ Արցախի թեմին, միաժամանակ՝ կարեւոր տուեալներ հաղորդելով թեմի մասին. «Վեհափառ Տէ՛ր, Ղարաբաղի թեմը պարմական թեմ է, որին պէտք է առանձին ուշք դարձնել եւ նրան տալ մի առանձին հմուտ եկեղեցական եւ պարմական գիտութիւնների եւ զարգացման տէր առաջնորդ: Ոչ մի թեմ այնքան վանք չունի, ինչ որ Ղարաբաղն ունի – Գրչոյ

վանք, Ամարասի վանք – Աղուանից երկրի կաթողիկոսարանը, Ղեոնդեանց վանք, Շուշանիկի վանք, Պարկի Սուրբ Գեորգ Զորավարի վանք, Յակովբ հայրապետի վանք, Յովհաննու կաթողիկե Գանձասարի վանք, Խոթայ վանք, Կիչան գիւղի Անապատ վանք, Երից Մանկանց վանք, եղել է Առաքելի վանք եւ Հռոեկի վանք, այցելուները տեսնելով այդ վանքերը երբեմն կենդանի, ուրախ, այժմ անմարդաբնակ, խաւար, սգոյ սեւ շղարշով պատած՝ ակամայից թափում է ոլոռն-ոլոռն, կայլակ-կայլակ արտասուքի հեղեղ: Թեմի մայրաքաղաք Շուշին աներուած է 1920 թուին թուրք-հայկական ընդհարման ժամանակ: Կողոպտուած եւ աներուած են մօտ 3 հազար տուն, 4 եկեղեցիներ, կոյսերի մի վանք, չնայելով, որ նրա կործանմանն անցել է 26 տարի, բայց քաղաքի հսկայական մասը դեռ մնում է աներակ»⁸:

Իր առաջին նամակից շատ չանցած՝ Մայիսի 20ին, Պետրոս քահանան Գեորգ Զ.ին է ուղարկում Լեոնային Ղարաբաղի գիւղերի, եկեղեցիների, վանքերի ցուցակը, միաժամանակ՝ առաւել մանրամասն ներկայացնելով Արցախի փակուած թեմի առկայ վիճակը.

Ղարաբաղի թեմն ունի մի քաղաք - Ստեփանակերտ - որի եկեղեցին դարձուած է թատերասրահ, մի եկեղեցի էլ վերաբացուած է Մարդակերտ գիւղում: Մնացած 182 գիւղերից [միքանի] գիւղ ունին կանգուն եկեղեցիներ, 5 գիւղի եկեղեցիներ աներուած են, 5 գիւղի եկեղեցիներ փլուել են եւ հրդեհուել թուրք-հայկական ընդհարումների ժամանակ, իսկ 26 գիւղեր եկեղեցիներ չեն ունեցել:

Ղարաբաղի թեմն ունի 12 վանք, երբեմն կենդանի, իսկ այժմ խաւար եւ անմարդաբնակ: Այդ վանքերը այժմեան ժամանակում թէեւ կորցրած են իրենց հմայքը եւ հեղինակութիւնը, բայց եւ այնպէս պէտք է պահպանուին որպէս հնութիւն: Գանձասարի վանքի սենեակները երկար ժամանակ անմարդաբնակ եւ անխնամ մնալով՝ անձրեւների եւ ձիւնի տակ՝ սենեակները արդէն փլուել են:

Եւ Ստեփանակերտ քաղաքումն էի, լսեցի, որ կառավարութիւնը շրջաբերական գրութիւններով կարգադրել է գիւղական խորհուրդներին այդ վանքերին ձեռնամուխ չլինել եւ պահպանել որպէս հնութիւն:

Ղարաբաղի թեմին պիտի տալ մի ժիր, աշխուժ, առոյգ եւ եկեղեցական եւ պատմական գիտութիւնների տէր եւ ոչ ուտող,

խմող, քնող եւ հանգստացող առաջնորդ, որպէսզի այդ վանքերի մերձակայ գիւղերից 3-4 ընտանիք խնդրելով, համոզելով եւ յորդորելով տեղափոխել տայ այդ վանքերը, եւ այնտեղ զարգացնել տայ երկրագործութիւն, անասնապահութիւն, ոչխարապահութիւն, մեղուապահութիւն, թռչնապահութիւն եւ շերամապահութիւն, այդպիսով վանքերը կենդանութիւն կը ստանան եւ որպէս հնութիւն խնամքով կը պահպանուին:

Շուշի քաղաքը աւերուած է, այնտեղ բնակուելու յարմարութիւն չըկայ, պէտք է առաջնորդը բնակուի Ստեփանակերտ քաղաքում, բայց այնտեղ էլ նա բնակարան բոլորովին չի կարող գտնել, մնում է, որ նա բնակութիւն հաստատի Գանձասարի կամ Ամարասի վանքերում: Այդ երկու վանքերը գտնուում են հայաշատ կենտրոններում, Ամարասը ազատ սենեակներ շատ ունի⁹:

1947 Յունուարի 4ին Վարդգէս քահանան, թեմի եկեղեցիների իրավիճակի մասին ԳՀԽին զեկոյց ներկայացնելով, նշում է նաեւ, որ Մարտակերտի եկեղեցին ունի երկու քահանայ, որոնցից մէկը բնակում է Մարտակերտում, իսկ միւսը հովում է շրջակայ միքանի գիւղերը: Զեկուցագրում տեղեկութիւններ են հաղորդում նաեւ եկեղեցու տնտեսական վիճակի մասին, ըստ որոնց՝ 1946ին նախատեսուած էր 20.000 ռուբլու մուտք, մինչդեռ ստացուած եկամուտը կազմել է 2.965 ռուբլի, իսկ ելքը՝ 2.919 ռուբլի¹⁰:

Վարդգէս քահանայի՝ նոյն թուականի Հոկտեմբերի 20ին ԳՀԽին ուղղած զեկուցագիրը եւս բացառիկ սկզբնաղբիւր է, որը խիստ կարեւոր մանրամասնութիւններ է հաղորդում ինչպէս Մարտակերտի եկեղեցու, այնպէս էլ տուեալ ժամանակահատուածում Արցախի փակուած թեմում տիրող վիճակի մասին, ուստի վաւերագիրը ներկայացնում ենք գրեթէ ամբողջութեամբ.

Ազգիս Վեհափառ Հայրապետը Յուլիս ամսի 6-ին ինձ ընդունելու ժամանակ շատ հետաքրքրուեց Լեռնային Ղարաբաղի եկեղեցիների եւ վանքերի խնդրով: Ի վիճակի չլինելով բաւարար պատասխաններ տալ Վեհին, ես խոստացայ մօտ ապագայում շրջել Ղարաբաղը եւ զեկուցում ներկայացնել:

Արդ կատարելով խոստումս, գրում եմ եւ յայտնում հետեւեալը: Ինքնավար Լեռնային Ղարաբաղը անցեալում իր ներկայ սահմանների մէջ ունեցել է 119 եկեղեցի, որոնցից 1945 թուականին վերաբացուել է միայն Մարտակերտինը: Գիւղական

այս եկեղեցին անշուք է: Ծխական երկու քահանաները՝ Աբգար Տէր-Յովհաննիսեան եւ Ղեւոնդ Տէր-Աստուածատրեան կրօնական լիազօրի մօտ գրանցուելուց յետոյ, Մարտակերտի ֆինբաժնի կողմից տուրքաւորում են անմիջապէս: Սրանցից իրաքանչիւրի եկամուտը 15,250 ռուբլի, ֆինբաժինը պարտաւորեցնում է տուրք վճարել 3408-ական ռուբլի մի քանի նուագով: Սրա հետ միասին նրանք զրկւում են հողամասից օգտուելու իրաւունքից, չեն ազատում գիւղատնտեսական տուրքից, 19-րդ յօդուածի համաձայն տուրքաւորում են՝ առանց ի նկատի առնելու նրանց ծերութիւնը: Պայմաններից մէկն այն է լինում, որ պիտի հովուեն Մարտակերտի հետ միասին միայն հինգ գիւղ, եթէ ուրիշ գիւղեր հովուեն, պիտի վճարեն յաւելեալ տուրք:

Անկարող լինելով դուրս գալ այս ծանր բեռն տակից, քահանաներից Ղեւոնդ Տէր-Աստուածատրեանը հենց սկզբից հրաժարում է պաշտօնից, իսկ Տէր Աբգարը թողնում է քահանայագործութիւնը անցեալ Ապրիլ ամսից:

Յարդարելու համար սրանց պաշտօնավարելու խնդիրը՝ ես բողոք եմ ներկայացնում շրջսովետի նախագահին. վերջինս կարգադրում է թեթեւացնել քահանաների տուրքը. Տէր Աբգարը Սեպտեմբերի 10-ից նորից անցնում է գործի, իսկ Տէր Ղեւոնդը մնում է հրաժարուած:

Ըստ չափաբերական մատեանի Մարտակերտում եւ շրջակայ գիւղերում 1946 թուին 65 մկրտութիւն է եղել, 19 թաղում եւ մի պսակ: 1947 թուին եղել է 4 մկրտութիւն եւ 2 թաղում: Օրինակատարութիւնների այս պակասը քահանաները բացատրում են այսպէս. գիւղերից մէկում մկրտութիւն անելիս մկրտում է եւ մի երեխայ, որը պարտկոմի քարտուղարի որդին է, լուրը տարածւում է, պարտկոմի քարտուղարը յանդիմանութեան է արժանանում եւ սպառնալիք ստանում, որ կը հեռացուի պարտիայի շարքերից: Այս դէպքից յետոյ հաւատացեալներն էլ քաշւում են կրօնական ծէս կատարել տալուց, իսկ մեռելաթաղին աւելի եւս ճնշւում են քահանայ հրաւիրելուց, որովհետեւ թաղմանը ներկայ են լինում գիւղսովետի եւ կոլխոզի նախագահները:

Սեպտեմբերի 10-ին Մարտակերտի եկեղեցին դիտելուց յետոյ, քահանայի հետ բարձրացանք գերեզմանատուն: Այդ ժամին մի տասնամեայ հասակի ննջեցեալ բերին. քաղաքացիական կարգով թաղումը կատարելուց յետոյ, մէկը մեզ հրաւիրեց հոգեհա-

ցի: Քրիստոնէական մեր պարտքը կատարելով, օրհնեցինք սեղանը եւ մխիթարական խօսք ասացինք. ներկայ էին եւ կոլխոզի եւ գիւղսովետի նախագահները, որոնց վերաբերմունքի մասին մենք վատ բան ասել չենք կարող: Չնայած այս ամէնին, եկեղեցական խորհրդի նախագահի ասելով, հաւատացեալները կաշկանդուած էին իրենց զգում, եւ եթէ եկեղեցին անշուք է, պատճառը հենց ճնշուածութիւնն է, յօգուտ եկեղեցու աշխատողներին լաւ աչքով չեն նայում. ինքը, որ ջրօրհնէքի խաչն է հանել ջրից, դա եւս խօսակցութեան առարկայ է մնում: Սեպտեմբերի 15-ին եղայ եւ Ստեփանակերտ: Գործադիր կոմիտէի նախագահն ինձ ընդունեց յարգանքով. մի ժամ խօսակցութիւն ունեցայ հետը, նա էլ պատրաստակամութիւն յայտնեց օգնել ինձ: Տեսակցութիւն ունեցայ եւ հաւատացեալների հետ: Սակայն այստեղ ոչինչ չի կարելի անել, որովհետեւ Ստեփանակերտում եկեղեցու շէնք չկայ, եւ ոչ էլ մի տուն, որ աղօթարան ծառայի: Ստեփանակերտը փոքր քաղաք չէ, 10 հազարից անելի հայ բնակչութիւն ունի. հաւատացեալների թիւը քիչ չէ այստեղ. սա հին Խանքենդն է, ի բնէ եկեղեցի չի ունեցել¹: Այստեղից երեւում է Շուշուայ Ղազանչեցոց եկեղեցին՝ լքուած ու անտիրական. միամիտներ կան, որոնք երազում են քանդել այդ եկեղեցին եւ նրա քարերով մի նորը շինել Ստեփանակերտում: Մարտունու շրջան էլ անցայ, այստեղ էլ ինձ պատրաստակամութիւն յայտնեցին օգնելու. իմ գալու մասին յայտնեցին գիւղերին, բայց հնարաւորութիւն չընձեռեցին այցելելու այդ գիւղերը: Ճանապարհի դժուարութիւնների պատճառով ես եղայ միայն Գիւնէ Ճարտար եւ Ղուգէ Ճարտար մեծ գիւղերում: Հակառակ իմ կամքին չկարողացայ տեսնել Չանախչի (Աւետարանոց - Ն.Ա.) յայտնի գիւղը, Ամարասի եւ Գանձասարի վանքերը եւ բազմաթիւ եկեղեցիներ ու մատուռներ, որոնցից շատերի գմբէթները, ասում են վնասուած են, խորաններն ու սեղանները կարիք ունեն վերանորոգման. ցաւալին այն է, որ դրանցից եւ ոչ մէկը հսկողութեան տակ առնուած չէ հնութիւնները պաշտպանող կոմիտէի կողմից: Խօսք չկայ, որ հաւատացեալները այս պայմաններում էլ կարող են նորոգութիւններ անել եւ եկեղեցիները բանալ, բայց որ նրանց նախանձութիւնը անտարբերութեան եւ արհամարհանքի է հանդիպում շատերի կողմից, դա էլ հերքել չի կարելի: Փաստ է

նաեւ այն, որ եկեղեցիները բանալուց յետոյ պէտք է մնան փակ. նոր քահանայացուներ չունինք, հին քահանաներից կենդանի մնացածները, որ ծեր են եւ թուով քիչ, մօտ չեն գալիս... Սրանցից մէկն էլ Գիւնէ Ճարտար գիւղի աւագ քահանայ Յովհաննէս Վարդապետեանը (վախճանուեց ամսոյս 2-ին): Սրա պատմելով Սօս գիւղի կոլխոզի նախագահը Ամարասի վանքում ուխտատուների մատաղի մտով լի կաթսան կրակի վրայից վերցրել է եւ մսի կտորտանքը ոտի տակ կոխահան արել¹²:

ԱՄԱՐԱՍԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

1948ի սկզբին Գէորգ Զ. կաթողիկոսը որոշում է քայլ առաջ անել եւ համարձակ որոշում է ընդունում. առանց խորհրդային իշխանութիւններին դիմելու որոշում է վերաբացել Ամարասի վանքը եւ այդ նպատակով Արցախ է ուղարկում Յակոբ արեղայ Մանգասարեանին: Սակայն Ադրբեջանի իշխանութիւնները բացարձակապէս մտադիր չէին նահանջել իրենց հակահայկական ու հակաեկեղեցական քաղաքականութիւնից եւ պատրաստ էին խափանելու Արցախի թեմի աստիճանական վերականգնմանն ուղղուած Հայ եկեղեցու բոլոր քայլերը: Նրանք բնականաբար քաջ գիտակցում էին, թէ ինչ նշանակութիւն կարող է ունենալ Արցախի թեմի առաջին հոգեւոր կենտրոնի վերաբացումը, եւ հենց սկզբից կասեցնում են այդ գործընթացը: Յունուարի 18ին Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդ Սուրէն եպիսկոպոս Թորոսեանը հաղորդում է Մայր Աթոռ, որ թէ՛ Ստեփանակերտում եւ թէ՛ Մարտունիում տեղական իշխանութիւնները թոյլ չեն տուել Յակոբ արեղային գնալու Ամարաս՝ *«պատճառաբանելով, որ առանց Ադրբեջանի հոգեւոր պաշտամունքի լիազօր ընկ. Շահբազբեկովի գրաւոր առաջադրութեան չեն կարող որեւէ հայ հոգեւորականի թոյլ տալ գործուղուել այնպիսի մի շրջան, ուր ոչ մի եկեղեցի պաշտօնապէս բացուած չէ»*: Սուրէն եպիսկոպոսը յայտնում է, որ Յունուարի 15ին անձամբ է գնացել Շահբազբեկովի մօտ, բացատրել գործի հանգամանքը եւ խնդրել համապատասխան գրաւոր թոյլտուութիւն տալ, սակայն վերջինս առարկել է, որ առանց ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր կրօնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահի Ի. Պոլիանսկու կարգադրութեան չի կարող նման թոյլտուութիւն անել: *«Ի վերջոյ առաջարկեց ինձ Յակոբ արեղային իրեն մօտ դրկել, գործի*

հանգամանքն անձամբ նրանից իմանալու եւ նրա հետ ծանօթանալու: Յակոբ արեղան նրա մօտ եղել է, կէս ժամից աւել հարց ու փորձ է արել եւ ոչ մի թուղթ չի տուել, որ ճանապարհի Ամարաս: Ըստ երեւոյթին այս դէպքի առթիւ նա մանրամասն գրել է Մոսկուա ընկ. Պոլիանսկուն»: Սուրէն եպիսկոպոսի զեկուցագրից յայտնի է դառնում նաեւ, որ Ամարասի եկեղեցու բացման փորձ երկու տարի առաջ արել էր նաեւ թեմի նախկին առաջնորդ Ներսէս եպիսկոպոսը՝ երկու անգամ յատուկ գրութիւններով դիմելով նոյն Շահբազբեկովին, սակայն որեւէ արդիւնք չի եղել¹³:

Գէորգ Զ.ն 1948 Յուլիսի 22ին Ամարասի վերաբացման անհրաժեշտութեան վերաբերեալ նամակ է գրում Պոլիանսկուն. «Հաշուի առնելով, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչութեան գերակշռութեամբ 120 բնակավայրերի առկայութեան պայմաններում, ոչ մի եկեղեցի չկայ՝ հաւաքացեալ բնակչութեան այսպիսի զանգուածին սպասատրելու ունակ, խնդրում եմ Ձեր միջնորդութիւնը համապատասխան մարմիններին՝ Ամարասի վանքի բացման թոյլտուութիւն ստանալու համար: Այն կը սպասատրի մէկ ծայրագոյն վարդապետ-վանահայր, որը, իբրեւ Էջմիածնի ներկայացուցիչ, առիթ կ'ունենայ ծանօթանալու տեղի հաւաքացեալ բնակչութեան պահանջմունքներին եւ այդ մասին զեկուցելու Հայոց Հայրապետին»¹⁴:

Սակայն խորհրդային կենտրոնական իշխանութիւնները լիովին պաշտպանում էին Ադրբեջանի վարած քաղաքականութիւնը, ինչը նաեւ յստակ ընդգծում է Պոլիանսկու՝ ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առնթեր Հայ եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ Ս. Յովհաննիսեանին ուղարկած նամակից. «Հոգեւոր հարցերով Խորհուրդը կարծում է, որ, եթէ «Ամարասի վանքը» բաց չի եղել, ապա Էջմիածնի Հոգեւոր Խորհուրդը իրաւունք չունէր Մանգասարեան արեղային ուղարկելու յիշեալ եկեղեցին, պաշտամունքային արարողութիւններ կատարելու, եւ տեղական մարմինները ճիշտ են արել, որ չեն թոյլատրել: Խորհուրդն առաջարկում է Ձեզ, կաթողիկոսի հետ անհատական զրոյցում մեկնել սոյն հանգամանքը եւ խորհուրդ տալ այսուհետ հոգեւոր սպասատրների նշանակման ժամանակ նախապէս պարզել, թէ արդեօք նոյն եկեղեցու բացման վերաբերեալ խորհրդային մարմինների որոշումն առկա է»¹⁵:

Մի փոքր առաջ անցնելով՝ նշենք, որ յետագայում էլ Գէորգ Զ.ն, պարբերաբար խորհրդային իշխանութիւններին ներկայացնելով

նոր եկեղեցիների բացման անհրաժեշտությունը, կարելի էր նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքում գործող եկեղեցիներ բացելու խնդիրը: Աւելորդ է յիշեցնել, որ կաթողիկոսի այդ պահանջը հետետղականօրէն մերժուում էր¹⁶:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՅԵՏԱԳԱՅ ՈՂԻՍԱԿԱՆԸ

Իսկ մինչ Ամենայն Հայոց կաթողիկոսը փորձում էր վերաբացել Ամարասի Վանքը, Լեռնային Ղարաբաղի միակ թոյլատրուած եկեղեցին միառժամանակ դադարել էր գործել: Ընդ որում տեղական իշխանությունները դրան չէին հասել եկեղեցին փակելու հրաման արձակելով, այլ ուղղակի դիմել էին իրենց ամանդական մեթոդներից մէկին՝ ծանր հարկերի տակ էին դրել եկեղեցու քահանային, որը, սեփական ընտանիքին սովի չմատնելու համար, հարկադրուած թողել էր քահանայագործումը եւ աշխատանքի անցել կոլտնտեսութիւնում: 1948 Օգոստոսի 30ին Գէորգ Զ. կաթողիկոսին ուղղած զեկուցագրում, Սուրէն Եպս. Թորոսեանը տեղեկացնում է.

Ղարաբաղում բացուած միակ Մարտակերտի գիւղական եկեղեցին տնտեսական վատթար պայմանների մէջ լինելով հոգեվարքի օրեր է ապրում: Եկեղեցական Խորհրդի անդամներն ու վերստուգիչ յանձնախումբը 1946 թուից եկեղեցին լքելով հեռացել են գործից: Բուն մարտակերտցի Աբգար քահանայ Տ. Յովհաննիսեանը այս տարի ծննդեան ու Զատիկ տօների արդիւնքը վերցնելուց յետոյ մտել է կոլխոզ եւ այնտեղ է աշխատում, եկեղեցին անխնամ ու անտէր թողնելով: Նա իւր հեռանալը պատճառաբանում է այս տարուայ հազար րուբլի եկամտային տուրքով, որն անցած տարիներ յօժարութեամբ վճարել էր, իսկ այս տարի մտադրութիւն չունի տալու: Ոչ մի քահանայ յանձն չի առնում Մարտակերտի եկեղեցուն ծառայել, չնայած այդ եկեղեցու ծխատէր քահանայի իրաւասութեան տակ է եղել մօտ 50 գիւղ, մի շարք ուխտավայրեր, եւ այդ շրջանին է պատկանում Գանձասարի, Երից Մանկանց եւ Խութայ վանքերը¹⁷:

Յաջորդող տարիներին, ինչպէս երեւում է Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդի 1949 Մայիսի 31ին¹⁸ եւ 1950 Դեկտեմբերի 30ին¹⁹ Մայր Աթոռ ուղարկած հերթական զեկուցագրերից, Մարտակերտի եկեղեցու վիճակը չէր փոխուել. եկեղեցին փակ էր, քահանան շարունակում էր աշխատել

կոլտնտեսութիւնում, իսկ ուրիշ որեւէ քահանայ յանձն չէր առնում սպասաւորել այնտեղ: Նշուած վերջին գեկուցագրում Սուրէն Եպիսկոպոսը յայտնում է. «Երկու շաբաթ առաջ մօտս Եկաւ այնտեղի (Մարտակերտի - Ն.Ա.) նախկին ծխարէր Աբգար քահանայ Տ. Յովհաննիսեանը, նրան առաջարկեցի նորից ընդունել Մարտակերտի եկեղեցուն սպասաւորելու պաշտօնը եւ խոստացայ Բագուի եկեղեցու միջոցներից նրան ամսական 500 ռ. ռոճիկ տալ: Նա բացարձակ կերպով մերժեց առաջարկս՝ պատճառաբանելով, որ ... նորից քահանայագործելով իւր եւ իւր ինչքի վրայ այնպիսի ծանր եկամտային հարկ է գալու, որ եթէ իւր տունն էլ ծախի, չի կարող նորա տակից դուրս գալ: Ոչ մի քահանայ յանձն չի առնում այնտեղ պաշտօնավարել եւ ոչ մի կոլխոզնիկ յանձն չի առնում եկեղեցական խորհրդի անդամ գրուել»²⁰:

Արդէն նշել ենք, թէ՛ Մարտակերտի եւ թէ՛ Խորհրդային Ադրբեջանի տարածքում գործող միւս եկեղեցիների վերաբացման հարցում իր էական դերակատարումն էր ունեցել Վարդգէս քահանայ Գրիգորեանը: Նկատի ունենալով այդ կարեւորագոյն հանգամանքը եւ Վարդգէս քահանայի 35ամեայ քահանայական ծառայութեան վաստակը, թեմական խորհրդի անդամները դիմել էին Սուրէն Եպիսկոպոսին՝ միջնորդել Ամենայն Հայոց կաթողիկոսին, որպէսզի Վեհափառ Հայրապետը, ի նշան գնահատանքի, աւագ քահանայութեան պատիւ շնորհի բազմավաստակ հոգեւորականին²¹: Միջնորդութիւնը յարուցուել էր եւ արժանացել Գէորգ Զ.ի հաւանութեանը: 1950 Մայիսի 15ին Վարդգէս քահանային տրուած հայրապետական կոնդակում ասում է. «Ադրբեջանի եւ Թուրքեստանի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Սուրէն Եպիսկոպոսը, Թեմական Խորհուրդը եւ Բագուի ու Կիրովապատի եկեղեցական Խորհուրդները եւ ի վերջոյ պաշտօնական գործերով Թեմին այցելութեան ելած հայրապետական ներկայացուցիչ Գերշ. Տ. Վահան Արքեպիսկոպոսը միաբերան միջնորդում են Ձեզ աւագ քահանայութեան պատուի արժանացնել: Նկատի առնելով Բագուի, Կիրովապատի եւ Մարտակերտի եկեղեցիների վերաբացման նկատմամբ Ձեր թափած ջանքերը, Բագուի եւ Թեմի միւս եկեղեցիների վերանորոգութեան ու բարեզարդութեան համար Ձեր կատարած օգտաւէտ աշխատանքները: Այլեւ Ձեր երկարամեայ օգտաւէտ քահանայագործութիւնը Աստուծոյ Տաճարում

*Մենք այս Հայրապետական կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաք.
Քահանայութեան բարձր կոչումը»²²:*

1950ականների սկզբին Վարդգէս Ա. քահանան փոխարինում է Սուրէն Եպս. Թորոսեանին՝ կրկին ստանձնելով թեմի առաջնորդական փոխանորդի պաշտօնը: Նա 1952 Փետրուարի 14ին ԳՀԽին հաղորդում է, որ Աբգար քահանայ Տէր Յովհաննիսեանի հեռանալուց յետոյ Մարտակերտի եկեղեցին տարիներով անխնամ է մնացել եւ սկսել քայքայուել, իսկ տեղական իշխանութիւններն էլ որոշել են բռնագրաւել եկեղեցին. «Սրանից մի քանի ամիս առաջ, մարդիկ օգտուելով եկեղեցու անտիրութիւնից կոտորաւորում են եկեղեցու լուսամուկներն ու դռները, իսկ տեղական իշխանութիւնը օգտուելով հանգամանքից բռնագրաւում է եկեղեցին, առանց այդ մասին լիազօրից իրաւունք ստանալու դարձնում է եկեղեցին պահեստ: Մարտակերտից այդ հանգամանքի վերաբերեալ յայտնում են լիազօրին, որը մի խիստ կարգադրութիւն է գրում տեղական իշխանութեանը նրանց ապօրինի վարմունքի դէմ եւ ինձ էլ կարգադրում է մեկնել Մարտակերտ եւ հետ ստանալ գրաւած եկեղեցին»: Վարդգէս առաք. քահանան իր զեկուցագրում շարունակում է, որ մեկնել է Մարտակերտ եւ տեղական իշխանութիւններից միջանի օրուայ ընթացքում հետ վերցրել եկեղեցին, ապա մաքրել այն, նորից կախել եկեղեցու զանգը, անգամ փոքրիկ վերանորոգումներ կատարել: Եկեղեցին յետագայում անխնամ չթողնելու համար նաեւ պահակ է վարձել, որի աշխատավարձը պիտի վճարէր թեմական խորհուրդը: Եկեղեցին արդէն իսկ անմխիթար վիճակում էր գտնուում. «Եկեղեցու այժմեան դրութիւնը գտնում է աննախանձելի դրութեան մէջ, կրօնի թիթեղները ժանգոտուած են եւ տեղ-տեղ բոլորովին պոկուած, ներսի պատերը սեւացած է եւ կեղտոտ, այնպէս որ եթէ մտածելու լինենք եկեղեցին իր կոչման բարձրութեան վրայ դնել, հարկաւոր կը լինի ծախսել առնուազն 7-8 հազար ռուբլի»: Վարդգէս առաք. քահանայի խօսքի շարունակութիւնից տեղեկանում ենք, որ Մարտակերտում գտնուելու ժամանակ նա տեղի շրջկոմի նախագահի եւ կուսքարտուղարի կողմից միաժամանակ ստացել էր թէ՛ խիստ տագնապալի լուր եւ թէ՛ նաեւ բաւականին հետաքրքիր առաջարկ. «Մարտակերտի բարեկարգման պլանի մէջ ընկնում է եւ եկեղեցին, կարող է նա քանդուել, առաջարկեցին նրա փոխարէն Գանձասարի վանքը: Իմ կարծիքով այդ առաջարկը մեզ համար չափազանց ձեռնարկ է այն պատճառով, որ նախ մարտակերտցիք եկեղեցի չեն

յաճախում, նրանցից ոչ մի շահ չկայ, ոչ նիւթական եւ ոչ էլ հոգեկան, երկրորդ՝ Գանձասարի վանքը ուխտատւորների է, որտեղ յաւոր պատշաճ օրերին հաւաքւում են ուխտատւորները, այնտեղ կարելի է եւ մոմ վաճառել եւ, եթէ հնարաւոր լինի, այդ օրերին մի քահանայ ուղարկել արարողութիւն կատարելու համար»²³:

Մայր Աթոռը, բնականաբար, հաւանութիւն է տալիս Գանձասարի վանքը ստանալու հեռանկարին՝ Մարտի 18ին հրահանգելով Վարդգէս աւագ քահանային. «Նկատի առնելով, որ համաձայն տեղական իշխանութեան յայտարարութեան, ի թիւս այլ շէնքերի, հայոց եկեղեցին եւս, ընկնելով պլանի տակ՝ ենթակայ է քանդման եւ դրա փոխարէն Ձեզ առաջարկել են ստանալ Գանձասարի վանքը, Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, քննութեան առնելով այդ հարցը եւ տալով իր համաձայնութիւնը, առաջարկում է Ձեզ՝ ըստ հնարաւորին շուրջ՝ ձեւակերպել վանքի ստացումը եւ այդ մասին անմիջապէս հաղորդել Գերագոյն Հոգեւոր Խորհրդին»²⁴:

Դժուար է թերագնահատել այն նշանակութիւնը, որ կարող էր ունենալ Գանձասարի գործող վանքը արցախահայութեան հոգեւոր կեանքը վերակազմաւորելու եւ կենտրոնացնելու գործում: Առաջին հայեացքից առնուազն տարօրինակ է թւում խորհրդային իշխանութիւնների կողմից նման առաջարկ ներկայացնելը Հայ Եկեղեցուն, քանի որ խորհրդային ողջ շրջանում Արցախում վարած հակակեղեցական քաղաքականութեան տրամաբանութեան սահմաններում բոլորովին չի տեղաւորւում այն, որ իշխանութիւններն իրենք են առաջարկում ետ ստանալ եկեղեցի, այն էլ վերջին հարկւամեակների ընթացքում Հայոց Արեւելից կողմանց հռչակաւոր հոգեւոր կենտրոնը: Պատկերն առաւել ընդգրկուն տեսնելուն նպաստում է պատմաբան Էդուարդ Դանիէլեանի բերած տեղեկութիւնները՝ հիմնուած վանքեցի Յովհաննէս Ասրեանի անձնական արխիւի ու նրա համագիւղացիների վկայութիւնների վրայ: Հեղինակը նշում է, որ 1950ականներին Բաքուի իշխանութիւնների կարգադրութեամբ տեղացի միքանի կոմունիստներ վերոնշեալ Ասրեանին կարգադրում են պայթեցնել Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցին. «Յ. Ասրեանը մեկնում է շրջկենտրոն՝ Մարդակերպ, հանդիպում շրջկոմի երկրորդ քարտուղարին եւ յայտնում, որ եթէ իրեն ստիպեն եկեղեցին պայթեցնել, ապա ինքնասպան կը լինի, բայց եկեղեցուն չի վնասի: Պարզուեց, որ քարտուղարը նոյնպէս

դէմ էր նման վանդալիզմին: Փոխադարձ վստահութեան շնորհիւ պայմանաւորութիւն ձեռք բերուեց, որ Յովհաննէսը առերես չպիտի հրաժարի պայթեցնելու հրահանգը կատարելուց, իսկ իրականում, տարբեր պատճառներ յարուցելով, ձգձգի դրա կատարումը մինչեւ մարզային ղեկավարութեան միջոցով կը կասեցուէր որոշումը, իսկ քարտուղարը, իր հերթին թոյլ չէր տայ դրա համար Յովհաննէսի նկատմամբ խիստ պատիժ կիրառել»²⁵: Որոշումը հնարաւոր է լինում կասեցնել, իսկ նոյն քարտուղարի ջանքերով էլ Ասրեանը ստանձնում է Գանձասարի Վանքի պահպանութեան եւ խնամքի պարտականութիւնները՝ յետագայ տարիներին բաւականաչափ զգալի նպաստ բերելով այդ գործում²⁶:

Մենք պարբերաբար ընդգծում ենք խորհրդային իշխանութիւնների՝ Արցախում վարած քաղաքականութեան հակահայկական եւ հակաեկեղեցական բնոյթը՝ նկատի ունենալով ինչպէս Մոսկուայից լիովին հաւանութիւն եւ աջակցութիւն ստացող ադրբեջանական իշխանութիւնների սանձարձակութիւններն ու կամայականութիւնները, այնպէս էլ ԼՂԻՄում պաշտօն զբաղեցնող որոշ հայազգի տարրերի ապազգային կեցուածքը: Բայց անշուշտ հասկանալի է, որ Արցախի տեղական իշխանութիւնների ոչ-բոլոր ներկայացուցիչներն էին այդ շարքում. մեծ թիւ էին կազմում նաեւ հայրենասէր եւ ազգային արժէքների կրող անհատները, որոնք, հասկանալի պատճառներով յաճախ ստիպուած լինելով քողարկուած գործել, այդուհանդերձ պաշտպանում էին արցախահայութեան շահերը, մեղմացնում կամ անգամ չէզոքացնում Բաքուի հայատեաց քաղաքականութեան հետեւանքները: Կարծում ենք, որ նման անհատների եկեղեցանպաստ դիրքորոշման գործօնի առկայութիւնը չպիտի բացառել նաեւ Մարտակերտի եկեղեցու վերաբացման եւ թոյլատրուած լինելու հարցում: Այս ենթահողի վրայ ենք դիտարկում նաեւ Գանձասարի Վանքի շուրջ ծաւալուած վերոնշեալ իրադարձութիւնները եւ վանքը Հայ Եկեղեցուն վերադարձնելու ցանկութիւնը: Այն փաստը, որ յետագայում այդ գործընթացը շարունակութիւն չունեցաւ, մեզ մղում է ենթադրելու, որ տեղական իշխանութիւնների մակարդակով արուած առաջարկութիւնն հաւանաբար արգելափակուել է կենտրոնական իշխանութիւնների կողմից:

Վերադառնալով Մարտակերտի եկեղեցու ճակատագրին՝ արձանագրենք, որ Վարդգես Ա. քահանային այդուհանդերձ յաջողում է համոզել Աբգար քահանային՝ կրկին ստանձնել եկեղեցու հոգետոր հովուի պարտականությունները. «Տ. Աբգար քահանան Մարտի 5-ի թուակիր նամակով ցանկութիւն է յայտնում անցնել իր քահանայական պաշտօնին 400 թուրքի ռոճիկով՝ ի նկարի ունենալով, որ նա ուրիշ ոչ մի եկամուտ չի ունենալու: Յայտնելով վերոնշեալի մասին Գերագոյն հոգետոր խորհուրդիդ, խնդրում ենք թոյլ տալ Բաքուայ եւ Կիրովաբադի եկեղեցիների հաշուին 400 թուրքի վճարել Մարտակերտի եկեղեցու քահանայ Տէր Աբգարին, որով նախ՝ պահապանի 130 թուրքին խնայած կը լինենք, երկրորդ՝ եկեղեցու շէնքը կ'ազատենք քայքայումից եւ երրորդը եւ ամենակարեւորը՝ հաւատացեալների հոգեկան պահանջներին բաւարարութիւն կը տանք»²⁷: Սա առկայ պայմաններում լուազոյն լուծումն էր, եւ ԳՀԽՆ Մարտի 22ի թուակիր նամակով տալիս է իր համաձայնութիւնը²⁸:

Այսպիսով Վարդգես Ա. քահանայի յամառ եւ հետեւողական ջանքերով վերաբացուած Մարտակերտի եկեղեցին վերստին սկսում է գործել, ընդ որում՝ դարձեալ նոյն քահանայի շնորհիւ: Եթէ անգամ մի կողմ թողնենք այս արժանաւոր եւ նուիրեալ հոգետորականի՝ Բաքուի եւ Թուրքեստանի թեմում կատարած բազմարդիւն աշխատանքն ու բերած մեծ աւանդը, ապա միայն Մարտակերտի եկեղեցու հարցում ունեցած նրա վճռորոշ դերակատարութեան համար այս քահանան արժանի է այլատեսակ յարգանքի եւ խոնարհումի: Իսկ թեմակիցների կողմից նրա նկատմամբ բարձր գնահատանքի հերթական վկայութիւններից էր նաեւ այն փաստը, որ 1952 Յունիսի 1ին Բաքուի թեմական եւ եկեղեցական խորհուրդները միասնաբար դիմում են Գէորգ Զ. կաթողիկոսին՝ վարդապետական ականակուռ լանջախաչով պարգեւատրելու Վարդգես Ա. քահանային²⁹: Ամենայն Հայոց կաթողիկոսը սիրով կատարում է այդ խնդրանքը եւ Յունիսի 10ին հայրապետական կոնդակով պարգեւատրում բազմավաստակ հոգետորականին³⁰:

Աբգար քահանայ Տէր Յովհաննիսեանը մինչեւ իր կեանքի վերջ հովում է Մարտակերտի եկեղեցուն, սակայն, այդ ժամանակահատուածը կարճ է տեւում՝ շուրջ երկու տարի: Յամենայնդէպս 1954 Հոկտեմբերին, ինչպէս այդ մասին 1955

Յունուարի 22ի իր զեկուցագրում յայտնում է Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդ Գարեգին Ծ. Վրդ. Վարդանեանը, Մարտակերտի եկեղեցին կրկին թափուր էր մնացել Տ. Աբգարի մահուանից յետոյ։ Գարեգին Ծ. Վրդ.ը տեղեկացնում է ԳՀԽին, որ դարձեալ հնարաւոր չէ քահանայ գտնել։ Եկեղեցու հոգեւոր հովուի պարտականութիւնները ստանձնելու գրաւոր պատրաստականութիւն էր յայտնել Մեծ Շէն գիւղի նախկին ծխատէր Ղեւոնդ քահանան, սակայն այդ խոստումն ու դիմումը մնացել էին թղթի վրայ։ 1954ի Հոկտեմբերին Գարեգին Ծ. վարդապետն այցելել էր Մարտակերտ, ծանօթացել եկեղեցու վիճակին, ապա իր մօտ հրաւիրել Տ. Ղեւոնդին։ Սակայն վերջինս ոչ միայն չէր ներկայացել առաջնորդին, այլեւ յանկարծակի փոխել էր որոշումը՝ հրաժարուելով քահանայագործելուց, իսկ այդ մասին առաջնորդին տեղեկացրել էր Մեծ Շէն գիւղի կոլտնտեսութեան վարչութեան նախագահը։ Թեմակալ առաջնորդը նաեւ յայտնում է, որ տեղական իշխանութիւնները դեռեւս չեն փորձել գրաւել եկեղեցին, եւ խնդրում է Մայր Աթոռից քահանայ ուղարկել³¹։

ԳՀԽի որոշմամբ Մարտակերտի եկեղեցի է ուղարկում Խորէն քահանայ Տէր Յակոբեանը։ Սակայն վերջինս 1955 Մարտի 8ի թուակիր մի նամակով դիմելով մեզ անյայտ հասցեատիրոջ («Հայր Սուրբ» դիմելաձեւից պարզ է, որ հասցեատէրը վարդապետ է կամ արեւլայ) հաղորդում է, որ եկեղեցին գրեթէ անբնակութեամբ է՝ ծածկը փլուզուած էր, հող ու քար խառնուած իրար, լուսամուտների փեղկերը գողացել էին, իսկ դռները՝ ջարդոտել։ Ինքը՝ Տ. Խորէնը, ստիպուած էր ապրել հիւրանոցում, ստացած 400 ռուբլին արդէն վերջանում էր, եւ առկայ պայմաններում մնալն անհնար համարելով՝ քահանան խնդրում է իրեն հետ կանչել Մարտակերտից³²։

Ամենայն հաւանականութեամբ՝ Խորէն քահանան կարճ ժամանակ յետոյ հեռացել էր Մարտակերտից։ 1955 Յուլիսի 6ին գրուած նամակով Գարեգին Ծ. վարդապետը մինչեւ իսկ փորձում էր նրա մասին տեղեկութիւն ստանալ ԳՀԽից՝ նշելով, որ քահանան այդպէս էլ չի ներկայացել իրեն³³։

ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գէորգ Զ. կաթողիկոսը վախճանուեց 1954 Մայիսի 9ին, իսկ 1955 Սեպտեմբերի 30ին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուեց Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Վազգէն եպիսկոպոս Պալճեանը: Վազգէն Ա. կաթողիկոսի դիրքորոշումը Արցախի հարցում միանշանակ էր ու յստակ. Լեռնային Ղարաբաղը (ինչպէս նաեւ Հայաստանից պոկուած հայկական այլ երկրամասերը՝ Նախիջեւանը, Ախալքալաքը եւն.) պէտք է վերամիաւորուեն մայր հայրենիքին: Այս պահանջը գահակալութեան առաջին իսկ շրջանից Վազգէն վեհափառի կողմից խորհրդային բարձրագոյն իշխանութիւններին ներկայացուած կարեւորագոյն հարցերից էր կազմում³⁴: Ի սկզբանէ վեհափառի ուշադրութեան առանցքում էր նաեւ Արցախի եկեղեցիների հարցը: Ստորեւ ներկայացնում ենք մի հատուած Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդ Եզնիկ եպիսկոպոս Ազնաւորեանի՝ 1956 Փետրուարի 29ի զեկուցագրից, որը մեզ յայտնի վերջին սկզբնաղբիւրն է Մարտակերտի եկեղեցու վերաբերեալ: Այն միաժամանակ նաեւ խիստ արժէքաւոր տեղեկութիւններ է պարունակում արցախցիների՝ Հայ եկեղեցու հանդէպ ունեցած վերաբերմունքի, Գանձասարի Վանքի վիճակի մասին, ինչպէս նաեւ յստակ ընդգծում է Վազգէն Ա. կաթողիկոսի ուշադրութիւնը եւ մտահոգութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի եկեղեցիների ու հոգեւոր կեանքի հանդէպ.

Թեմիս երրորդ եկեղեցին Մարտակերտ գիւղի եկեղեցին է: Այս եկեղեցու վիճակը ուրոյն պատկեր է ներկայացնում: Այս եկեղեցին եւս բացուել է եւ թեգիստրացիայի³⁵ է ենթարկուել 1945թ., բայց շատ հեղհեղուկ վիճակ է ապրել: Սկզբնական շրջանում ունեցել է քահանայ, բայց տեղական ինչ-ինչ աննպաստ պայմանների պատճառով հեռացել է: Մայր Աթոռից եւս ուղարկուած է եղել քահանայ. նա եւս թողել հեռացել է: Վերջին քահանան եւս տէր Յակոբ Մանկասարեանը ուղարկուել էր Մայր Աթոռից: Սա եւս տեղում բնակարանի եւ այլ աննպաստ պայմանների շնորհիւ խիստ ծանր կացութիւն էր ապրում եւ հեռանալու դիմում էր տուել: Անհրաժեշտ եղաւ յատուկ ուշադրութեան առարկայ դարձնել Մարտակերտի եկեղեցին:

Ինչպես յայտնի է գեր. Հոգ. Խորհրդիդ՝ Վեհափառ Վազգէն Ա. կաթողիկոսը առաջադրանք էր տուել ինձ հոգալու Լեռնային Ղարաբաղի հայկական չորս գիւղերում եկեղեցիներ վերաբացելու միջնորդութիւն յարուցելու Ադրբեջանի ՍՍՌ-ի կառավարութեան համապատասխան օրգանների առաջ: Մեր միջնորդութիւնները անհետեւանք մնացին, մեզ հասկացնել տուին, որ մենք իրաւասու չենք եկեղեցի վերաբանալու միջնորդութեան դիմելու, այլ միայն այն գիւղի համայնքը կարող է միջնորդութիւն յարուցելու, ուր եկեղեցու կարիք զգան: Մենք գիտենք, որ Լեռնային Ղարաբաղի այժմեան պայմաններում ոչ մի համայնք չի կարող ինիցիատիւա³⁶ ցուցաբերել եկեղեցու վերաբացման համար միջնորդութիւն յարուցելու:

Այդպիսի դրութիւնը մեզ թելադրում է այլ մօտեցում ցուցաբերել այդ մեզ համար յուժ կարեւոր հարցում:

Լեռնային Ղարաբաղում միակ թոյլատրուած եկեղեցին՝ Մարտակերտի եկեղեցին է. թեմակալ առաջնորդը եւ թեմիս խորհուրդը իրենց առանձին հոգածութեան առարկայ դարձրին Մարտակերտի եկեղեցու հարցը: Լեռնային Ղարաբաղի աւելի քան 200 հայաբնակ գիւղերը մօտ 250 հազար բնակչութեամբ ունէին միայն մեկ եկեղեցի՝ Մարտակերտինը, որպէս միակ յենակէտը Ղարաբաղի հայ ժողովրդին կրօնական կարիքները հոգալու՝ նախնեաց ազգային եկեղեցու հետ կապելու:

Մարտակերտի եկեղեցու դրութիւնը եւ կարիքները մօտից ուսումնասիրելու համար ուղարկուեց թեմական խորհրդի անդամ՝ Լեռնային Ղարաբաղին լաւ ծանօթ Վահան³⁷ աւագ քահանայ Գրիգորեանը, մեր եկեղեցու դպիր Նազարէթի ուղեկցութեամբ: Նրանց ներկայութիւնը առանձին հետաքրքրում էր առաջ բերել գիւղերում: Տեղի քահանայ Յակոբ Մանկասարեանի հետ պատարագ մատուցելուց յետոյ, համաձայն մեր տուած հրամանագրերի խորհրդի նոր ընտրութիւն էին կատարել. եւ նորընտիր խորհրդի անդամների հետ արձանագրել էին եկեղեցու վիճակը, եւ անհրաժեշտ վերանորոգման եւ եկեղեցին բարեկարգ վիճակի բերելու այլ միջոցառումները:

Պարզուեց, որ եկեղեցու կտուրը խարխուլուած է, անձրեւի ջրերը թափանցում են եկեղեցու ներսը, դռները եւ պատուհանները բաց են՝ ապակիներ չկան, եւ այլ պակասութիւններ: Կազմուած

նախահաշուի համաձայն ուղարկեցինք պահանջուած անհրաժեշտ գումարը: Նորընտիր խորհրդի անդամների հետ Յակոբ քահանան եռանդուն կերպով կարճ ժամանակում վերանորոգել էին եկեղեցու կտուրը, դռները եւ պատուհանները. շէնքը ներսից եւ դրսից սպիտակացրել եւ եկեղեցին բարեկարգ վիճակի են բերել: Բագուի եկեղեցուց եւս անհրաժեշտ եկեղեցական իրեր, նկարներ եւ այլ կարելու առարկաներ ուղարկուեցին: Նաեւ եկեղեցուն անհրաժեշտ գրքեր:

Եկեղեցու արեւմտեան մասը ժամանակին ներսից կտրուած է եղել եւ վերածուած է եղել կինոյի: Ներկայումս մենք կարգադրել ենք այդ կտրուած մասը վերածել բնակարանի երկու սենեակի, որով կը լուծուի նաեւ քահանայի բնակարանի հարցը. այդ հարցը՝ բնակարանի խնդիրը, ամենացաւոտ հարցն էր. գիւղում չկար սենեակ քահանայի համար. եկեղեցու խորանումն էր տեղաւորում: Այժմ այդ անյարմարութիւնը եւս վերանում է:

Եկեղեցու բարեկարգ վիճակը ներկայումս կենդանի հետաքրքրութիւն է առաջ բերել բնակչութեան մէջ. յաճախում են եկեղեցի. հետաքրքրութիւն է առաջ բերել նաեւ շրջակայ գիւղերում՝ ուր աւելի քան տասը տարի եկեղեցի չի եղել. հոգեւորականութեան երես չեն տեսել:

Թէեւ ներկայ քահանան՝ Մանկասարեան տ. [Յակոբը] իւր պատրաստութեամբ եւ գիտելիքներով շատ անհամապատասխան է իր պաշտօնին, բայց առայժմ եռանդուն աշխատում է եկեղեցին գոնէ արտաքուստ հաճելի դարձնել յաճախորդների համար: Ժամանակի ընթացքում անշուշտ կը ճարուի յարմարաւոր պատրաստուած քահանայ նրան փոխարինելու ու ժողովրդին հաստատուն կերպով եկեղեցուն կապելու եւ օրինակելի եկեղեցի դարձնելու: Մարտակերտի եկեղեցին վերակենդանացել է. յուսալի է, որ այդ եկեղեցին կենդանի օրինակ կը դառնայ նաեւ միւս շրջաններին իրենց գիւղերում եւս եկեղեցի ունենալու. նոր եկեղեցիներ վերաբանալու մեր դիմումները անհետեւանք մնալուց յետոյ՝ մեր ուշադրութիւնը ուղղեցինք Լեռնային Ղարաբաղի պատմական յուշարձաններից ամենակարելու Գանձասարի վանքի ներկայ դրութիւնը պարզելու գործին:

Վահան աւագ քահանայ Գրիգորեանին յանձնարարեցի Մարտակեր[տ]ից Գանձասար մեկնելու՝ տեղում պարզելու վանքի վիճակը: Նրա զեկուցումից պարզուեց, որ այդ հրաշալի կոթողը կանգուն է եւ անվնաս: Պետական հսկողութեան ներքոյ է եղել եւ ունեցել է պահակ, բայց ինչ-ինչ պատճառներով պահակը հեռացել է, եւ այժմ հսկող չկայ: Վանքի պարիսպները եւ դարպասը կանգուն են: Շէնքերը՝ քարաշէն կամարակապ, խուցերը եւ միւս շէնքերը եւս հիմնականում կանգուն են: Միայն փայտեղէնը՝ դռներն ու պատուհանները հանուած տարուած են:

Քանի որ գիւղերում նոր եկեղեցիներ բանալու մեր միջնորդութիւնը բացասում է. վանքերի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հսկողութեան վերադարձնելու կարգը՝ պրոցեդուրան բնականաբար այլ պիտի լինի: Եկեղեցիները կապուած են գիւղական համայնքների հետ, իսկ վանքերը միշտ ենթակայ են եղել Ամենայն Հայոց կաթողիկոսի իրաւասութեանը, ուրեմն վանքերի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հսկողութեան եւ իրաւասութեան վերադարձնելու միջնորդութիւնը դէպի Բոջի³⁸ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից:

Վերաբացուած Գանձասարի վանքը եւ Մարտակերտի եկեղեցին կարող են հանդիսանալ կարեւոր գործոններ Լեռնային Ղարաբաղի Հայ ազգաբնակչութիւնը իր հայրենի եկեղեցուն կապելուն³⁹:

Յետագայում, Վազգէն Ա.ի՝ Արցախի եկեղեցիների վերաբերեալ խորհրդային իշխանութիւններին ներկայացուած պահանջներում որոշակի տեղ են գտնում նաեւ այս զեկուցագրով հաղորդուած տեղեկութիւններն ու խորհուրդները:

1956 Մայիսի 12ին տեղի ունեցաւ Վազգէն Ա. կաթողիկոսի նշանաւոր հանդիպումը ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Բուլգանինի հետ⁴⁰, յընթացս՝ վեհափառը Բուլգանինին է յանձնում իր երկու յայտնի նամակները⁴¹: Նամակներից առաջինում Վազգէն Ա.ը լուծում պահանջող առաջադրուած խնդիրների մէջ յստակ մատնանշում է նաեւ Արցախի եկեղեցիների հարցը. «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում, որտեղ ապրում են շուրջ 200 հազար հայեր, կայ միայն մէկ եկեղեցի, այն էլ ոչ թէ մարզային կենտրոնում, այլ հեռաւոր

գիտերից մեկում»⁴²: Ամենայն Հայոց կաթողիկոսը անհրաժեշտութիւն է համարում նաեւ Մայր Աթոռին վերադարձնել Գանձասարի վանքը⁴³:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ՝ ԱՐՑԱԽ

1957ին տեղի է ունենում մի բացառիկ երեւոյթ. Սեպտեմբերի 20ից Ադրբեջան կատարած հովուապետական այցի⁴⁴ շրջանակներում Վազգէն Ա. կաթողիկոսն իր շքախմբով (վեհափառին Մայր Աթոռից ուղեկցում էին Սահակ արքեպիսկոպոս Տէր-Յովհաննիսեանը, Վարդան եպիսկոպոս Տէր-Սահակեանը, Հայրիկ վարդապետ Աւետիսեանը եւ Յուսիկ արքեպիսկոպոս Սանթրեանը) Սեպտեմբերի 25ին Գանձակից ուղիղ մեկնում է Ստեփանակերտ: Կաթողիկոսը նախ այցելում է մարզգործկոմի խորհրդին, որտեղ ընդունելութիւն էր կազմակերպուած նրա պատուին, ապա նոյն օրը բարձրանում է Շուշի եւ լուռ աղօթք կատարում տեղի Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եւ Ս. Յովհաննէս Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցիներում: Սեպտեմբերի 26ին վեհափառն ու նրա ուղեկիցներն այցելում են Գանձասար, իսկ յաջորդ օրը՝ Ամարաս, որով էլ աւարտում է Վազգէն Ա.ի եռօրեայ այցը Լեռնային Ղարաբաղ:

Սա խորհրդային շրջանում միակ հովուապետական այցն էր Արցախ, որը, ինչպէս նշեցինք, իրօք բացառիկ երեւոյթ էր եւ գրեթէ անհաւատալի իրողութիւն: Անշուշտ, միամտութիւն կը լինի կարծել, թէ խորհրդային իշխանութիւններն առանց որեւէ խոչընդոտ յարուցելու, հեշտ ու հանգիստ համաձայնել էին կաթողիկոսի այցին: Արխիային որոշ գաղտնի փաստաթղթեր յաւելեալ լոյս են սփռում խնդրի կուլիսային կողմերի վրայ: Նման մի փաստաթղթից՝ Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ Ս. Գասպարեանի՝ 1957 Մարտի 28ին գրուած գաղտնի զեկոյցից տեղեկանում ենք, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը քանիցս ցանկութիւն է ունեցել հովուապետական այց կատարել ներքին թեմեր, սակայն «ամէն անգամ տարբեր պատրուակներով մենք խորհուրդ ենք տուել առայժմ յետաձգել նման ուղեւորութիւնը: Ներկայ դրութեամբ, երբ մի քանի տարուայ ընթացքում հարց է առաջադրուում յարկապէս Վրաստանում եւ Ադրբեջանում մի շարք հայկական եկեղեցիների բացման, եւ այդ հարցի լուծումը ձգձգում է, կաթողիկոսի նման այցը կարող է հայ հաւատացեալների կողմից

անառողջ դրսեւորումներ առաջացնել»։ Այդուհանդերձ Կաթողիկոսը շարունակում էր պնդել իր ցանկութիւնը՝ մատնանշելով նաեւ Սփիւքից եկող ճնշումն այդ հարցում. «Անբարենպաստ եղանակի պատրուակով մենք նրան առաջարկեցինք որոշ ժամանակով եւ յետագայում ուղեւորութիւնը։ Սակայն միանգամայն ակնյայտ է, որ նրան յետագայում նման ուղեւորութիւնից հեռու պահելն անհնար է եւ աննպատակալարմար»⁴⁵։ Յետագայում, ինչպէս տեսնում ենք, իրօք այլեւս անհնար է լինում խոչընդոտել հովուապետական այցը, սակայն մի աննշան թուացող, բայց միաժամանակ խիստ հետաքրքրական հանգամանք ենք ցանկանում մատնաշել նոյն Գասպարեանի մէկ այլ գաղտնի զեկուցագրում։ Ներկայացնելով Օգոստոսի 16ին կաթողիկոսի հետ զրոյցի մանրամասները՝ Գասպարեանը գրում է հետեւեալը. «Անդրադառնալով նրա՝ Բաքու, Կիրովաբադ եւ **Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջան (Գանձասարի վանք այցելելու համար) մօտակայ ուղեւորութեանը...**»⁴⁶ (ընդգծումը մերն է - Ա.Ս.)։ Ոչ մի խօսք նաեւ Շուշի եւ Ամարաս կատարելիք այցի մասին (եթէ մի պահ պատկերացնենք, որ Ստեփանակերտ, որպէս մարզկենտրոն, այցելելը տրմաբանական կարող էր համարուել)։ Այն տպաւորութիւնն է, որ հովուապետական այցից մէկ ամիս առաջ նախնական համաձայնութիւնն իշխանութիւնների հետ եղել է Արցախում միայն Գանձասար այցելելու վերաբերեալ, իսկ յետոյ (եթէ իհարկէ չենք սխալում) Վազգէն Ա.ին յաջողուել է համաձայնութեան գալ նաեւ միւս վայրերն այցելելու հարցում։ Սա մենք առաւել հաւանական տարբերակ ենք համարում, քան ենթադրելը, որ վեհափառը փաստի առաջ է կանգնեցրել իշխանութիւններին՝ տեղում անակնկալ կերպով ընդլայնելով արցախեան երթուղին։ Այդ պարագայում յետագայ փաստաթղթերում կը տեսնէինք գոնէ որեւէ ակնարկ դրա մասին։ Յաւելենք նաեւ, որ նոյն գաղտնի զեկուցագրում Գասպարեանը, նկատի ունենալով Վազգէն վեհափառի աշխուժ դիրքորոշումը Արցախը Հայաստանին վերադարձնելու հարցում, շարունակում է. «Միաժամանակ խնդրեցի կաթողիկոսին անցանկալի խօսակցութիւնների պատրուակներ չտալ (նկատի ունենալով նրա այցը Լեռնային Ղարաբաղ)»⁴⁷։

Նկատենք նաեւ, որ *էջմիածին* ամսագիրը, ամենայն մանրամասնութեամբ ներկայացնելով Բաքուում եւ Կիրովաբադում հնչած անգամ բաժակաճառերը, զսպումսն է ցուցաբերում Արցախում կաթողիկոսի եւ տեղական իշխանութիւնների միջեւ եղած խօսակցութիւնները ներկայացնելու եւ վեհափառի կողմից բարձրացուած խնդիրների մասին մանրամասնութիւններ յայտնելու հարցում: Հաղորդում են շատ բան չասող միքանի նախադասութիւններ, ինչպէս օրինակ թէ՛ Ստեփանակերտի մարզգործկոմում կայացած ընդունելութեան ժամանակ «Մարգային գործադիր կոմիտէի խորհրդի նախագահ պ. Ռուբէն Շահրամանեանը եւ կուլտուրայի բաժնի պետ պ. Արտաշէս Բալայեանը յարգալից պատասխանում են Վեհափառ Հայրապետի մի շարք հարցումներին՝ Ղարաբաղի ազգաբնակչութեան, մշակոյթի, գիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան եւ այլ մարզերի վերաբերեալ»⁴⁸: Փոխարէնը խիստ կարեւոր տեղեկութիւններ ենք ստանում դարձեալ արխիւային գաղտնի փաստաթղթերից: Վազգէն վեհափառի հովուապետական այցի ընթացքում տեղական իշխանութիւնների կողմից որպէս կցորդ ուղեկցած Ադրբեջանի կրօնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազօր Մ. Մամեդովը Հոկտեմբերի 3ի իր գաղտնի զեկուցագրում նշում է, որ դեռ Ստեփանակերտում կաթողիկոսը, որպէս յիշեցում, իրեն է յանձնել այն եկեղեցիների ու վանքերի ցուցակը, որոնց հարցով խնդրել է միջնորդել Ադրբեջանի կառավարութեանը՝ դրանք բացելու համար: Այդ ցուցակում ԼՂԻՄի տարածքից ընդգրկուած էին Գանձասարի ու Ամարասի վանքերը եւ Ստեփանակերտի աղօթատունը: Կաթողիկոսը խնդրում է նաեւ տեղական իշխանութիւնների օգնութեամբ Շուշիի մայր եկեղեցին (խօսքը վստահաբար Ղազանչեցոց եկեղեցու մասին է) մաքրել աղբից, դռներ ու լուսամուտներ պատրաստել, որպէսզի անասուններն այլեւս չմտնեն եկեղեցի: Մինչ այս, Մամեդովն արդէն նշում է, որ եկեղեցին, որը մինչ այդ պէտք է ցանկապատուած լինէր Ադրբեջանի նախարարների խորհրդի որոշմամբ՝ համաձայն գլխաւոր յատակագծի, իրենց այցի ժամանակ քառասային վիճակում էր գտնուում, աղբով լի, քարերի մի մասը գողացուած: Իսկ Ամարասի վանքն էլ, որ հաշուառուած էր որպէս հանրապետական նշանակութեան յուշարձան, ծառայում էր որպէս ծխախոտի չորանոց⁴⁹: Յաւելեալ տեղեկութիւններ այս

մասին ստանում ենք Վազգէն Ա.ի՝ հովուապետական այցից մէկ տարի անց Գասպարեանին յղած բողոքագրից: Կաթողիկոսը նշում է, որ դառը կսկիծով ականատես է եղել Շուշիի եկեղեցու աննկարագրելի վիճակին. բացի նրանից, որ եկեղեցու գմբէթը փլուած էր, դռներն ու լուսամուտները՝ հանուած, երբեմնի աղօթավայրն ուղղակի ախոռի էր վերածուած. հենց այցի պահին երկու կով նիրհում էին եկեղեցու խորանում, իսկ յատակն ամբողջովին գոմաղբով էր պատուած: Անմխիթար վիճակում էր նաեւ Գանձասարի Վանքը, որն անտէրութեան էր մատնուած եւ թողնուած տարերքի աներածութիւններից անպաշտպան վիճակում: Կաթողիկոսը բողոքում է, որ չնայած արդէն անցել է մէկ տարի, սակայն այդպէս էլ այդ խնդիրներին լուծում չի տրուել⁵⁰:

ԱՐՑԱԽՆ ԱՅԼԵԻՍ ԱՌԱՆՑ ԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑՈՒ

Ամենատարօրինակը հովուապետական այցի ընթացքում եւ դրանից յետոյ ԼՂԻՄ տարածքում միակ թոյլատրուած եկեղեցու վերաբերեալ յանկարծակի լռութիւնն է: Նշել ենք արդէն, որ Եզնիկ եպիսկոպոսի զեկուցագիրը մեզ յայտնի վերջին սկզբնաղբիւրն է, որտեղ խօսուում է Մարտակերտի եկեղեցու մասին: Այդուհետ որեւէ յիշատակութիւն չկայ այդ եկեղեցու յետագայ ճակատագրի վերաբերեալ: Կարելի է ենթադրել, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի հովուապետական այցի ժամանակ եկեղեցին արդէն վերջնականապէս դադարել էր գործելուց: Այլապէս դժուար է հաւատալ, որ կաթողիկոսը, հարիւրաւոր կիլոմետրեր կտրելով եւ Մարտակերտի շրջանում գտնուող Գանձասար հասնելով, չայցելէր Լեռնային Ղարաբաղի միակ գործող եկեղեցի, որը Գանձասարից միքանի տասնեակ կիլոմետր հեռաւորութեան վրայ էր գտնուում: Մինչդեռ այդ մասին որեւէ ակնարկ չկայ, կարծես այն գոյութիւն էլ չունենար: Յաւելենք որ, Բագրատ Ուլուբաբեանը, ով Վազգէն Ա.ի՝ Ամարաս կատարած այցի ընթացքում վեհափառին ուղեկցողների թում էր, գրում է, որ Ամարասի մօտակայ Սօս գիւղում կոլտնտեսութեան նախագահ Ա. Մուքանեանը խոստանում է. *«Վեհափա՛ռ, մէկ էլ որ գաք, էնքան բարեկարգ պիտի տեսնէք [Ամարասը], որ դարձնէք մեր աշխարհի առաջին գործող եկեղեցին»*⁵¹ (ընդգծումը մերն է - Ն.Ք.): Ընդգծուած հատուածը մեզ մղում է մտածելու, որ տուեալ ժամանակ Արցախում գործող եկեղեցի այլեւս չկար, եւ Մուքանեանը որպէս այդպիսին տեսնելու

յոյս է յայտնում Ամարասի վերաբերեալ: Իսկ թէ ինչպիսի հանգամանքներում եւ ինչ պատճառներով էր Մարտակերտի եկեղեցին վերջնականապէս դադարել գործելուց՝ մեզ անյայտ է: Վաւերագրական տուեալ ստանում ենք ժողովրդական դէպուտատների Մարտակերտի քաղաքային խորհրդի գործկոմի՝ 1988 Մայիսի 17ին կայացրած որոշումից, որտեղ նշում է. «*Մարտակերտ քաղաքում նախկինում գործող սուրբ Կարապետ եկեղեցին 1963-1964 թուականներին յանձնուել է կինօմիատրոման կազմակերպութեանը եւ առայսօր շէնքը անմխիթար ու վթարային լինելով հանդերձ իբրեւ թէ օգտագործում է կինօցուցադրութեան համար*»⁵²:

Այսպիսով, 1956-1957ականներից մինչեւ 1989ին թեմի վերաբացումն Արցախում այլեւս գործող եկեղեցի չի եղել: Վազգէն Ա. կաթողիկոսը յետագայում էլ շարունակում էր խորհրդային իշխանութիւնների առջեւ բարձրացուած հարցերի շարքում կարեւորել նոր եկեղեցիների վերաբացման անհրաժեշտութիւնը (այդ թւում նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքում)՝ հարցը հասցնելով ընդհուպ ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ Ն. Խրուշչովին⁵³: Սակայն թէ ինչպիսի «լուծումներ տուեցին» խորհրդային իշխանութիւնները Վազգէն վեհափառի առաջ քաշած հարցերին, ինչպէս Արցախը Հայաստանին միաւորելու, այնպէս էլ եկեղեցիների վերաբացման պարագայում, կարծում ենք բոլորովին անլորդ է յիշեցնել:

ՎԱՆԴԱԼԻԶՄ ԵՒ ՊԱՏՄԱԶԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Զուգահեռաբար ընթացող գործընթացներում Ադրբեջանն անելի ու անելի էր կատարելագործում Արցախը բուն հայկական հետքից զրկելու, հայ բազմադարեայ ազգային հոգեւոր-մշակութային արժէքները վերացնելու կամ իւրացնելու եւ պատմական ճշմարտութիւնը խեղաթիւրելու ճանապարհով այն վերջնականապէս սեփականելու քաղաքականութիւնը: Արցախի թեմի փակումը հայկական տարածքների բռնազաւթումից յետոյ կարելի է համարել Ադրբեջանի երկրորդ կարեւորագոյն «յաղթանակը» համաթուրքական ցեղասպան ծրագիրը շարունակելու եւ ուրիշի (տուեալ դէպքում՝ արցախահայութեան) պատմական հայրենիքում, բնիկներին տեղահանելու եւ բնաջնջման գնով սեփական պետութեան պատմութիւնն ու ապագան կերտելու գործում:

Գաղտնիք չէ, որ 1918ից առաջ Ադրբեջան պետութիւն երբեւէ գոյութիւն չի ունեցել, իսկ «ադրբեջանցի ազգ» հասկացութիւնն առհասարակ ասելի ուշ՝ խորհրդային շրջանում է ձեւաւորուել⁵⁴։ Տարածաշրջանում բնիկներ ներկայանալու համար ադրբեջանցիներին անհրաժեշտ էր ներկայացնել պատմական յենք, մինչդեռ թէ՛ պատմութիւնը եւ թէ՛ ներկայ իրականութիւնը բոլորովին այլ բան էին վկայում. «Նոր ինքնութիւն ստեղծելու ճանապարհին, որի մասն էին կազմում ի շարս այլ համալիրների, «պատմական յիշողութիւնն ու պատմական հայրենիքը», ադրբեջանցիների ամենամեծ խոչընդոտը փաստօրէն մեծաքանակ հայ բնակչութիւնն էր եւ հայերի մշակութային ահռելի ժառանգութիւնը, որը հնագիտական, ճարտարապետական եւ ազգագրական հազարաւոր յուշարձանների տեսքով սփռուած էր Խորհրդային Ադրբեջանի ողջ տարածքով՝ առաւել հոծ կուտակումներ ունենալով Արցախում, Ուտիքում եւ Նախիջեւանում»⁵⁵։ Ուստի անհրաժեշտ էր ազատուել տանտէրերի թէ՛ կենդանի ներկայութիւնից, եւ թէ՛ նրանց պատմական հետքերից։ Արցախի թեմի փակումով ազգային-եկեղեցական հոգեւոր ակունքներին կապող կենդանի օջախները՝ գործող եկեղեցիները, լոեցուեցին եւ վերջնականապէս վերածուեցին զուտ յուշարձանների։ Սակայն թէ՛ վանքերն ու եկեղեցիները, թէ՛ հազարաւոր միա յուշարձաններն իրենց լոութեան մէջ այնքան խօսուն էին, որ ի լուր աշխարհի ուղղակի աղաղակում էին ճշմարտութիւնը՝ դրանով իսկ դառնալով բռնազաւթիչների կողմից բարբարոսաբար ոչնչացման ենթակայ առաջնահերթ թիրախներից մէկը. «ազգային ինքնութիւնների ձեւաւորման պայմաններում տարածքների հետ պատմական կապի օրինականացման համար մղուող պայքարը դրանցում գտնուող յուշարձանները դարձնում են վանդալիզմի թիրախներ։ Եթէ յուշաձանաւոր կողմը ջանքեր է գործադրում ամէն գնով դրանք պահպանելու, ապա հակառակ կողմը փորձում է տարբեր եղանակներով ոչնչացնել դրանք, որովհետեւ վերջիններս խոչընդոտում են իր կողմից իր իսկ էթնիկ ինքնութեանն առաջարկած յիշողութիւն-անցեալ-տարածք հայեցակարգի քարոզչութեանը, քանի որ օտար յուշարձանները խոչընդոտ-յուշեր են բռնազաւթուած տարածքում «օտարի» ներկայութեան մասին, այն «օտարի», ով ժառանգութեան պահանջով է հանդէս գալիս»⁵⁶։

Դարերի ընթացքում հայ ժողովուրդն Արցախում արարել էր քրիստոնեական սրբարանների առաել քան հարուստ ժառանգություն, որը, սակայն, «հարուստ» էր նաեւ ժամանակի ընթացքում իրեն բաժին հասած պատուհասներով. «Կարծում եմ թէ ոչ մի նահանգ այնպէս հարուստ չէ այսպիսի սրբավայրերով ու ուխտատեղիներով, ինչպէս Արցախեան նահանգն. բայց եւ այնպէս ոչ մի նահանգի վանքեր, անապատներ եւ ուխտատեղիներ այնպէս բոլորովին զրկուած չեն իւրեանց բարոյական եւ նիւթական փառքերից, ինչպէս Արցախեան վանքերն եւ սրբավայրերն»⁵⁷: Սակայն, եթէ Հայաստանում եւ ԽՍՀՄ միւս հանրապետութիւններում հոգեւոր կոթողներն ու աղօթքի տները փակւում, անցնում, ձեւափոխւում կամ իսպառ ոչնչացւում էին բոլշեւիկեան արեւելքի պետական քաղականութեան արդիւնքում, ապա Ադրբեջանին ենթակայ տարածքներում առաել մեծ թափով մոլեգնող վանդալիզմն ունէր յստակ ընդգծուած ազգայնամոլական եւ հակահայկական բնոյթ, որի հետեւանքով նպատակադրուած ոչնչացւում էր բազմադարեայ պատմութիւն ունեցող քրիստոնեականն ու հայկականը, մինչդեռ անելի ուշ շրջանում ի յայտ եկած անհամեմատ սակաւաթիւ մուսուլմանական մզկիթներն ու յուշարձանները խնամքով պահպանւում եւ անգամ գովազդւում էին⁵⁸: Արդարեւ, «Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ կազմում թողնելուց յետոյ մարզում քանդուել, պայթեցուել, անցնել ու լրիւ կործանուել են 167 եկեղեցի, 8 վանքային համալիր, 120 հին գերեզմանատուն, 47 բնակավայր: Զարդուել, անհետ կորել եւ շինանիւթի են վերածուել անելի քան 1000 խաչքար, վիմագրութիւն: Բուդոգէրներով քանդուել, հարթեցուել եւ վարելահողի է վերածուել 13 պատմահնագիտական յուշարձան»⁵⁹:

Վանդալիզմին զուգահեռ գործի դրուեցին նաեւ պատմական իսկութեան ձեւափոխումն ու հայ քրիստոնեական հոգեւոր-մշակութային ժառանգութեան էթնոմշակութային եւ կրօնական պատկանելութեան խեղաթիւրումն ու իրացումը: Իրար ետեւից ասպարէզ իջնող ադրբեջանցի պատմագէտ-արարների մի ողջ խումբ (Զ. Բունիաթով, Զ. Գեյլեւ, Ի. Ալիեւ, Ք. Ալիեւ, Դ. Ախունդով, Ֆ. Մամեդովա եւն.), բառացիորէն սկսեց ստեղծագործել՝ պատմական փաստերի ու սկզբնաղբիւրների անտեսումով կամ աղաղակող կեղծիքներով նորոգեայ պատմութիւն յօրինել Ադրբեջանի համար: Համատարած «աղուանականացման» եւ ադրբեջանականացման

կիզակէտում յայտնուեցին նաեւ Արցախի թեմի պատմական անցեալն ու պատմաճարտարապետական կոթողները:

Խորհրդային շրջանից լայն թափ առած եւ աստիճանաբար «կատարելագործուող» վանդալիզմն ու ապօրինի իւրացումը առայսօր Ադրբեջանի հակահայկական քաղաքականութեան առանցքային բաղադրիչներ են կազմում: Ընդ որում, դրանք յաճախ զուգորդւում են իրար հետ. յուշարձանի «աղուանականացում» լինելը դեռ երաշխիք չէ, որ այն ապահովագրուած է վանդալիզմից (ինչպէս օրինակ Ամարասի պարագայում⁶⁰):

Ամփոփենք, որ հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու հոգետրմշակութային ժառանգութեան ոչնչացումը եւ կողոպտումը հիմնական մաս էր կազմում Արցախն ընդմիշտ հայազրկելու եւ սեփականելու Ադրբեջանի ընդհանուր քաղաքականութեան: Սակայն Արցախը վերջնականապէս Նախիջեւանի ճակատագրին ենթարկելու բարաբարոսական ծրագիրն անաւարտ մնաց շնորհիւ 1988ի համահայկական հուժկու պողոթնումի՝ արցախեան շարժման:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Տուեալ շրջանին անդրադարձել ենք նաեւ մենք՝ հիմնուելով հրատարակուած եւ նորայայտ վաւերագրերի ու կատարուած ուսումնասիրութիւնների վրայ (Գարիկ Սրկ. Ասրեան, «Խորհրդային Ադրբեջանի Բռնաճնշումները եւ Արցախի Թեմի Փակումը (1920-1933)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հատոր ԼԶ., Պէյրութ, 2016, էջ 317-348):

² Ինքնավար:

³ Արմենակ Մանուկեան, *Հայ Առաքելական Եկեղեցու Բռնադատուած Հոգետրականները 1930-1938 (Ըստ ՊԱԿի Փաստաթղթերի)*, Երեւան, Ամրոց, 1997, էջ 54-55:

⁴ Մանրամասն տե՛ս՝ Ստեփան Ստեփանեանց, *Հայ Առաքելական Եկեղեցին Սյրայինեան Բռնապետութեան Օրօք*, Երեւան, Ապոլոն, 1994, էջ 136-164:

⁵ Մելանիա Բալայեան, *Հայ Աղուանից Եկեղեցին (Սկզբնատրումից Մինչեւ Մեր Օրերը)*, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» Հրատ., 2009, էջ 216. նաեւ՝ Ս. Պարսամեան, «Ադրբեջանի Կողմից Իրագործուած Հայկական Յուշարձանների Ոչնչացումը՝ Որպէս Մշակութային Յեղասպանութիւն», *Ադրբեջանի Պետական Ահաբեկչութիւնը եւ Էթնիկական Զրոյմների Քաղաքականութիւնը Լեռնային Ղարաբաղի Դէմ (2010թ. Մարտի 21-24-ը Ստեփանակերտում եւ Շուշիում Կայացած Միջազգային Գիտագործնական Կոնֆերանսի Զեկուցումներ)*, «Կաճառ», 4 (47-58), Շուշի, 2010, էջ 162:

⁶ Միաշերտ նրբատախտակ:

⁷ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2695, թ. 8:

⁸ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2695, թ. 14:

-
- ⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2742, թ. 1:
- ¹⁰ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2696, թ. 17-18:
- ¹¹ Այս հարցում Վարդգես քահանան սխալում է, Ստեփանակերտն ունեցել է Ս. Գեորգ եկեղեցի, որը, ինչպես նշում էր նաեւ Պետրոս քահանայ Տէր Յովհաննիսեանի յայտնած տեղեկություններում, վեր էր ածուել թատերասրահի: Այսօր, Ս. Գեորգ եկեղեցու նախկին տեղում գտնւում է Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի շէնքը:
- ¹² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2696, թ. 31-33:
- ¹³ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2698, թ. 1:
- ¹⁴ *Վաւերագրեր Հայ եկեղեցու Պապմութեան (1938-1955 թթ.), Գիրք Զ., Գեորգ Զ Զէօրէքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմեց՝ Սանդրո Բեիբօղեան, Երեւան, «Ոսկան Երեւանցի» Հրատ., 1999, էջ 446:*
- ¹⁵ Նոյն, էջ 463-464:
- ¹⁶ Նոյն, էջ 464-465, 478, 612-613, 691, 797-798, 808, 811, 813:
- ¹⁷ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2701, թ. 1:
- ¹⁸ Նոյն, գ. 2704, թ. 22:
- ¹⁹ Նոյն, գ. 2708, թ. 89:
- ²⁰ Նոյն:
- ²¹ Նոյն, թ. 93:
- ²² Նոյն, թ. 64:
- ²³ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2713, թ. 12:
- ²⁴ Նոյն, թ. 18:
- ²⁵ Էդուարդ Դանիէլեան, *Գանձասարի Պապմութիւն*, Երեւան, «Գանձասար» Աստուածաբանական Կենտրոն, 2005, էջ 420-421:
- ²⁶ Նոյն, էջ 421-422:
- ²⁷ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2713, թ. 19:
- ²⁸ Նոյն, թ. 20:
- ²⁹ Նոյն, թ. 29:
- ³⁰ Նոյն, թ. 32:
- ³¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2718, թ. 7:
- ³² Նոյն, գ. 2608, թ. 1:
- ³³ Նոյն, գ. 2718, թ. 75:
- ³⁴ Մանրամասն տե՛ս՝ Սերհակ Ամիրեան, «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինը Եւ Խորհրդային Իշխանութիւնները (Ծննդեան 100-ամեակի Առթիւ)», *Պապմարանասիրական Հանդէս*, 2008, № 2, էջ 39-63. նաեւ՝ Հեղինէ Մկրտչեան, «Մեզ Անձանօթ Դարաբաղեան Շարժումը», *Հայոց Աշխարհ*, 25 Փետրուար, 2010, № 33 (3078):
- ³⁵ Վերանորոգման:
- ³⁶ Նախաձեռնութիւն:
- ³⁷ Թերեւս պէտք է լինի Վարդգէս:
- ³⁸ Չի հասկացում, վրիպակ է: Թերեւս պէտք է լինի «պիտի բխի»:
- ³⁹ ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 164, թ. 5-8:
- ⁴⁰ ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 113, թ. 6-13:

- ⁴¹ ՀԱԱ, ֆ. 823, ց. 2, գ. 3, թ. 1-8: Այս նամակները մատչելի են ընթերցող լայն շրջանակների համար. դրանք ուսերէնով հրատարակել է Ա. Ղազիեանը («Письма Католикоса всех Армян Вазгена I Председателю Совета Министров СССР Н. А. Булганину»՝ Ավարդ Ղազիեան, «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի Նամակները ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի Նախագահ Ն. Ա. Բուլգանինին»), *Պատմաքանասիրական Հանդես*, 2000, № 2, էջ. 249-255), իսկ հայերէնով՝ Ա. Բալեանը («Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի Նամակները ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի Նախագահ Ն. Ա. Բուլգանինին», *Տարեգիրք Ասրուածաքանութեան Ֆակուլտէտի*, Գ, Երեւան, 2008, էջ 281-288):
- ⁴² Նոյն, էջ 284:
- ⁴³ Նոյն, էջ 285:
- ⁴⁴ Մանրամասն տե՛ս՝ Հայրիկ վարդապետ Աւետիսեան, «Նորին Սուրբ Օծուփին Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի Հովուապետական Այցելութիւնը Ադրբեջանի Հայոց Թեմին», *Էջմիածին*, 1957, Ժ., էջ 12-33:
- ⁴⁵ ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 122, թ. 43-44:
- ⁴⁶ ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 128, թ. 43:
- ⁴⁷ Նոյն:
- ⁴⁸ Աւետիսեան, էջ 28:
- ⁴⁹ ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 129, թ. 38-41:
- ⁵⁰ ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 142, թ. 33-34:
- ⁵¹ Բագրատ Ուլուբաբեան, *Հայոց Արեւելից Կողմանց Եկեղեցին Եւ Մշակոյթը*, Երեւան, «Տիգրան Մեծ», 1998, էջ 358:
- ⁵² Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիւ, Արցախի թեմ: Ի դէպ, նոյն որոշման համաձայն՝ եկեղեցին հանում է կինոմիատրոման հաշուեկշիւից՝ նպատակ ունենալով այն վերանորոգել ու յանձնել տեղի հաւատացեալ համայնքին:
- ⁵³ ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 150, թ. 13-14:
- ⁵⁴ Ալեքսանդր Մանասեան, Ալէն Ղեւոնդեան, *Լեռնային Ղարաբաղ. Ինչպէս է Դա Եղել*, Երեւան, Հանրային Կապերի Եւ Տեղեկատուութեան Կենտրոն, 2011, էջ 19:
- ⁵⁵ Համէտ Պետրոսեան, «Մշակութային Էթնոցիդն Արցախում (Մշակութային Ժառանգութեան Բռնափորացման Մեխանիզմը)», *Ադրբեջանի*, էջ 138:
- ⁵⁶ Ա. Դիլանեան, «Ինքնութիւն, Յուշարձան, Վանդալիզմ (Ադրբեջանի Եւ Թուրքիայի Օրինակով)», *Ադրբեջանի*, էջ 155-156:
- ⁵⁷ Մակար Եպս. Բարխուդարեան, *Արցախ*, Երեւան, Տպ. «Ամարաս», 1996, էջ 2:
- ⁵⁸ Մանրամասն տե՛ս՝ Շահէն Մկրտչեան, *Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի Իրականացրած Յեղասպանութեան Անարմատիւն*, Ստեփանակերտ, Ազատ Արցախ, 2003, էջ 194-237:
- ⁵⁹ Շահէն Մկրտչեան, *Արցախեան Գրառումներ*, Երեւան, Նոյեան Տապան, 2001, էջ 360:
- ⁶⁰ Ուլուբաբեան, էջ 358-359: Դեռեւս 1967ին Ասատուր Մնացականեանը եւ Պարոյր Սեւակն ադրբեջանական պատմագեղծարարութեան հիմքերը լաւագոյնս բացայայտել ու հերքել են՝ համատեղ գրաքննադատութեամբ հանդէս գալով նշեալ երեւոյթի հիմնադիրներից Զիա Բունիաթովի *Ադրբեջանը VII-IX դդ.* գրքի հրատարակութեան առիթով եւ ստի ու կեղծիքի այդ տեսակն անուանելով «բունիաթովականութիւն» (А. Мнацаканян, Паруйр Севак, “По поводу Книги З.

Буниятова “Азербайджан в VII-IX вв.” Ա. Մնացականեան, Պարոյր Սեալ, «Զ. Բունիաթովի «Ադրբեջանը VII-IX դդ.» գրքի հրատարակության առիթով»), *Պատմաքանասիրական Հանդես*, 1967, № 1, էջ 177-190): Ադրբեջանցի կեղծարարների տեսութիւնների ու անպարարութիւնների ընդհանուր ամփոփ պատկերը տե՛ս՝ Виктор Шнирельман, *Войны Памяти. Мифы, Идентичность и Политика в Закавказье* (Վիկտոր Շնիրելման, «Յիշողութեան պատերազմներ. առասպելները, նոյնականացումը եւ քաղաքականութիւնը Անդրկովկասում»), Մոսկուա, 2003, էջ 201-222. նաեւ՝ Ուլուբաբեան, էջ 342-344:

PAGES FROM THE HISTORY OF THE CLOSED DIOCESE OF ARTSAKH (1933-1988)
(Summary)

FATHER NERSES ASRIAN
monk-deacon@mail.ru

After the closure of the Artsakh Diocese in 1933 the spiritual and political problems of Artsakh remained in the center of attention of the Catholicosate of Etchmiadzin. Etchmiadzin also tried to revive church life and reclaim churches in Nagorno Karabakh both through sending priests to Artsakh and through the clergy of the Diocese of Baku and Turkestan, but to no avail.

After the meeting of Archbishop Gevorg Chorekchyan with Joseph Stalin on April 19, 1945, the Soviet authorities' pressure on the Armenian Church was reduced, and some closed churches were reopened. Thanks to the efforts of the Prelate of Baku and Turkestan, Fr. Vardges Grigoryan, in 1945 the Martakert Surp Hovhannu Garabed Church was reopened. The church, however, was closed and reopened several times during 1955 and 1956. Eventually, the lack of a priest and the difficult conditions created by the Azeri authorities led to the closure of the church. Later on it was converted to a cinema. The Azeri authorities prevented all further attempts to reopen churches and send clergy to Artsakh.

In 1957 Catholicos Vazgen I paid a three-day pastoral visit to Artsakh. This was an exceptional visit during the Soviet period, and a very important event, which gave new impetus to the reclamation of the churches of Artsakh. In addition, the Catholicos raised the issue of the unification of Artsakh with Soviet Armenia. These issues, however, remained unaddresses by the Soviet authorities.

In order to fully eliminate Armenians and any traces of the Armenian Church from the Autonomous Region of Nagorno Karabagh, throughout the 1950 and 1960s the Azeri authorities continued to destroy the spiritual and cultural heritage of the Artsakh diocese through vandalism and barbarity on a large scale. They also rewrote the history of the region, claiming Azeri ancestry for the natives of the region and integrating them into Azeri history.

For the natives of Artsakh the 1988 national liberation movement was the only way to restore and preserve national identity, the right to freedom of conscience and religion.

Mainly using unpublished archival documents and material, the author sheds light on the history of the Diocese during these difficult decades.